ամենայն հիւանդաց եւ առաւել գողեաց, բորոտաց, պիսակաց։ Եւ եւ հալածումն զիւաց պղծոց յանձանց հաւատացելոց Քրիստոսի։ Որում եւ լիմն համանուն որ է ուսեալ 'ի Հերրայեցւոցն, սպասէ խնդրել նշանս 'ի Տէրունական պատկերէ[6]. այլ[7] եւ յիւր իմաստն հեթանոսական սպասանեալ ընդդիմաբան ինձ ճգնի, որպէս զուն զործելով եւ աշխատէ զիս բանիւ, բայց եւ 'ի Հոգւոյն սրբոյ իմ զիտելով, զոր նորայն շնորհ պարգեւի։

Եւ արդ որպէս ընդ հայելի ակամբ տեսանեմ՝ փութով 'ի ձեռն մեծապանծ նշանի, արժանաւոր խոստովանութեամբ 'ի Քրիստոս Յիսուս դաւանել զամենասուրբ Երրորդութիւն եւ զմի Աստուածութիւն, մկրտելով եւս 'ի մահն Քրիստոսի, եւ մեծապայծառ փառաք եւ պատուով Քրիստոսազգեաց լինելով։ Օն իսկ եւ արժանաւոր աշտիճանաւ կրօնաւորական քահանայութեամբ խառնի եւ 'ի դասս հայրապետաց սրբոց, յիշատակ ինձ լինելով Պատարագն Հօր բաշխելով զմարմին եւ զարիւն Տեառն, որպէս եւ 'ի հրապարակս նողուն. արդ միանգամ ունի թողուլ զտուն, զկին, եւ զորդիս եւ զագարակս, բառնալ եւ զխաչն Քրիստոսի գնալով[8] զհետ նորա։

Օն իսկ եւ բազմաց լինի լուսաւորիչ Քրիստոսական իմաստութեան լինելով եւ իւրն իսկ ժառանգ Աստուծոյ, առնէ եւ զհաւատացեալս սուրբ Երրորդութեան պատարագաւն Քրիստոսի՝ ժառանգ Աստուծոյ եւ ժառանգակից Քրիստոսի 'ի փառս իւր Հայրենի, որով եւ մեք ամենեքեան արժանաւորք եղիցուք[9] շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում Հօր եւ սուրբ Հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից. ամեն։

ԲԱՆ ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԼԻՒԱՆԱՆՑԻ ԿԱՐԾԵՑԵԱԼ ՀԱՅՐ ՔԵՐՈՎԲԷԻ ԱՌ ԱԶԳՆ ՀԱՑՈՑ ԵՒ ԱՌ ՎԵՐԱՏԵՍՈՒՉՆ ԲԵՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԻՄԷՕՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ։ *

Յառաջաբան պեառնէ Քերովբէի առ Սէրգիս եղբարս ազգին Հայոց։

Ընդ վայր պարպատին՝ ուռկանք որսորդաց,
Յորսալ խորասոյզ վայրագ լողակաց,
Նաւիր գիշերի Պետրոս վաստակեաց,
Մինչև Տէրունոյն ազդեալ հրամանաց,
Աղօտ շամանդաղ փաղփիւն պարծանաց,
Առեալ 'ի յանօթ 'ի մեր ծնողաց,
Նա իսկ գողտրական շուք գոլ նախորդաց,
Քան թէ պերճանալ ծուէնիւք ծիրանեաց,
Անդուլ անդադար 'ի ձայն հնծութեանց,
Ողբամ զանջատեալս աղդիս Արամեանց,
Եղուկ և աւաղ՝ խորթ այդ զաւակաց,
Ի գուբ սահելոց կարծեաց ստուերաց,
Անկան ոստուցեալք յիւրեանց մեր գրկաց,
Անսաստ կանոնի սուրբ Հայրապետաց,
Ի ժանտ նեստորի ըմպեն ըմբակաց,
Հոգւոյն ոչ բղխիլ 'ի յերկուց Անձանց,
Հայր 'ի յինքենէ, Որդի 'ի Հօրէ,
Հոգին 'ի նոցունց՝ սուրբ Գրիգոր ասաց,

---

6) 'ի դադափ. եւ յՅրդ օրին. յիք է Տէրունական պատկերէ։

7) յԶրդն աստի պակասէին մի քանի տողք մինչ ցայն վայր Եւ է հրապարակս նորուն։

8) յԶրդն եւ յՅրդն ունէր ասա Եւ։

9) յԶրդն այսպէս վերջաբանէր. քառասնորեակ ընդ Եւ ընդ Հոգին Աստուած Եւ մեր Եւ յաւիտեանս. ամեն։

* Ինչպէս գրած ենք դեկտ. ամսագրոյ մէջ երես. 195, այս հին գրուածքն է մին, զոր այլ երկու գրուածներով ընդունած ենք Հռոմգեղջ բարեկ. Մինասի Քահանայէն։ Մնացեալ երկուքը յաջորդ ամսագրոյ մէջ կը հրատարակենք։

Վարժին 'ի բանից եւ տիբականաց,
Ցանձին Քրիստոսի խառնիլ բնութեանց,
Ընդդէմ ժողովոյն Շիրակայ վանաց,
Ուր մեր հարք փախչին յայդ մոլար կարծեաց,
Ո՛չ ոք առ նոսա ժառանգող փառաց,
Թէպէտ 'ի սրբոց հասեալ դաս կարգաց,
Քանզի ըստ նոցա՝ ազգ մարմնաւորաց,
Համայնք արդեալք 'ի խիղճ կայանաց,
Երգեն 'ի դասս զՄարտիրոսաց,
Լինիլ դասակից երկնից հրեշտակաց,
Ի գալ 'ի պայքար լինին հակասաց,
Թէ չեւ են տուեալ վարձ առաքինեաց,
Ասեն թէ հոգիք, 'ի վախճան կենաց,
Հանդէպ ո՛չ լինին 'ի դատ յանցանաց,
Զի առանձնական դատ մէն մի անձանց,
Զունի առ նոսա հետք յիշատակաց,
Մարմին թաթախեալ յարիւն տան ռամկաց,
Ուսումն ինքնահնար նոր վարդապետաց,
Գոգ ո՛չ հաւատան անշուշտ պատգամաց,
Շատ է ճաշակումն լոկ հացին կենաց,
Ընդդէմ Առանց՝ Սոյ կանոնաց,
Վարեն զանապակ 'ի սկիհ նուիրաց,
Զերկուս 'ի տոնից տէրունականաց,
Խառնեն 'ի նշան խառնման բնութեանց,
Թէ մկրտութիւն յաշխարհականաց,
Զ'է ինչ իսկական ասեն ըստ քմաց,
Սուրբ կոյս Եւդոկիէ ինքնին մկրտեաց,
Զիւր հայր և զեղբայր ըստ յայսմաւուրաց,
Զօծման զիսորհուրդ ո՛չ տան հիւանդաց,
Ընդդէմ Ցակոբայ, բանին հրամանաց,
Զոլիս լուանան 'ի ջուր, ըստ տաճկաց,
Որպէս թէ նովին սրբին բիծք մեղաց,
Փոխեն զատացեալն առ 'ի հրեշտակաց,
Սուրբ Երրորդութեան լինիլ սրբասաց,
Եղեալ Պետրոսի թափչի հետագնաց,
Երբ զԽաչեցար տան Երից Անձանց,
Ահա ստուերականք 'ի հին օրինաց,
Պահեալք Հրէարէն 'ի Ռահ կենդանեաց,
Մարմին Քրիստոսի զոհ ողջակիզաց,
Շնորհեալ Աստուծոյ նորոգ օրինաց,
Ահա նորաւետ հուր ատրուշանաց,
Հուր խաւարահոլմ մաճուած պատրուգաց,
Աստուածատեսակ՝ պատիւ գեր փառաց,
Առնու 'ի Սաղիմ յայդ երկրպագուաց,

Տեսցես ստուգիւ զիսկ այդ պատգամաց,
Անդ 'ի հոլովիլ տասնամիւ ամաց,
Որպէս չեւ անցեալ ութսուն հինգ ամաց,
Եղև տեառ աղերձ պաշտօն հրայրեաց,
Առեալ արծաթոյ թեմն եկեղեցեաց,
Ծախեն թանգագին մէն մի երիցանց,
Ընթացք 'ի շաւիղ սիմոնականաց,
Առնուլ մարմնաւոր ընդ հոգեւորաց,
Հաղիւ թէ գտցես գիտակ զոք իրաց,
Որ են հարկաւոր հարկիւ միջոցաց,
Թէ ինչ ասիցես 'ի հաւատալեաց,
Կարծեն պղակրօն լինիլ սին մտաց,
Կազիւ տեսանեն սակ հոգեւորաց,
Բանին աստուծոյ ըստ վաճառողաց,
Կապեն արձակեն ո՛չ ըստ կանոնաց,
Ի գալ 'ի հանդէս մեծի պարգեւաց,
Պանծան պիտակօք ըստ կերպարանաց,
Ցերգոց շարական 'ի տաղ մեղեդեաց,
Թէ էր նուագօք հաւատք աստուծոյ,
Հաւատք բոլորէր 'ի ձայն բորենեաց,
Թէ բան հաւատոյ ախորժ ձեր կամաց,
Ի լաց ընկեցէք զղէն պղազդեաց,
Զի մեք լոկ գրչաւ լինիմք զինազգեաց,
Դիոշմել զոր Աստուած՝ մեզ վարդապետեաց,

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԶՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԷ

ՀՈՌՈՄՈՍԻՆ ՎԱՆԱՑ Ի ՇԻՐԱԿ։

(Շարունակութիւն)

Այս հայր Սարգիս զոր Աստղիկ կրէ Հոռոմոսին վանաց վանական, սմա մանկանուն դասանէր և անուանս ճոն. զի սա որ Հոռոմոսին վանաց էր վանական և դասու 'ի վերոյնշանակեալ ժողովին, շինեաց և զՍուրբ Գրիգոր Հառիճոյ, և զԿարմիր վանք յեղը Ախուրեան գետոյ յայժմեան Ղազլբիկիսայ. յորոյ արձանագրութեան գնի և թիւ վախճանի նորա. և է սա Երկրորդ 'ի կարգս Առաջնորդաց Հոռոմոսին